



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա, հեռ. 077863222

ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի հուլիսի « 28 » N 16-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, « Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի չորրորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 16.07.2020թ N 2/7.3/14800-20 գրությամբ ներկայացված պետական փորձագիտական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի « 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 38-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Եկամտային մասում՝
 - 1) Պակասեցնել համայնքի բյուջեի եկամուտները ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից 2520.0 հազ. դրամ:
 - 2) Ավելացնել պետական բյուջեից համայնքի բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ Համաձայն դրամաշնորհի հատկացման պայմանագրի 942.9 հազ. դրամ:
2. Ծախսային մասում՝
 - 1) Պակասեցնել 09.01.01 ծախսային ծրագրի 4267 հոդվածի 2520.0 հազ. դրամ ծախսը:
 - 2) Դրամաշնորհի հատկացման պայմանագրով նախատեսված եկամուտը՝ 942.9 հազ.դրամ, բաշխել 01.01.01 ծախսային ծրագրի 4111 հոդված:
 - 3) 09.01.01 ծախսային ծրագրի 4111 հոդվածից 2986.0 հազ. դրամ տեղափոխել 01.01.01 ծախսային ծրագրի 4111 հոդված՝ 1476.0 հազ դրամ, 4232 հոդված՝ 10.0 հազ. դրամ, 4237 հոդված՝ 200.0 հազ. դրամ, 4267 հոդված՝ 400.0 հազ. դրամ, 4269 հոդված՝ 400.0, 4239 հոդված՝ 500.0 հազ. դրամ:
 - 4) 09.01.01 ծախսային ծրագրի 4111 հոդվածից 2060.0 հազ. դրամ տեղափոխել 01.06.01 ծախսային ծրագրի 4212 հոդված՝ 960.0 հազ դրամ, 4239 հոդված՝ 500.0 հազ դրամ, 4251 հոդված՝ 200.0 դրամ, 4269 հոդված՝ 400.0 դրամ:
 - 5) 09.01.01 ծախսային ծրագրի 4111 հոդվածից 1500.0 հազ դրամ տեղափոխել 10.07.01 ծախսային ծրագրի 4729 հոդված:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ կողմ՝4 դեմ՝0 ձեռնպահ՝0

1. ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
2. ԱՆԴՐԻԱՍ ՍԵՐՈԲՅԱՆ
3. ԶԱԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
4. ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ ԿԱՐՆԱԿԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվականի հուլիսի « 28 »
գ. Հայկաշեն